

քի բնկնող մասը կազմում են գործերը, որոնցից շատ հիմնալիներն ու թանգարիները կան:

### ԶԳԵՍ ԵՒ ԶՍՐԴ

Ա. Կանանց.—Զոկերի տառենայաւառեկ զգեստն ու զիսի յարուցաները այժմ միմյանց պառանձներն են կրօւմ, Միջին սերունդը՝ վրացնուակ, իսկ նորը՝ եւրոպական տարազով է, հետեւովք և մի երկու տառենակ տարիներից յետոյ այս տարազը ևս բոլորին գուրս կը դայ գործածութիւնից, տեղի տալով երոպականին:

Կանանց զգեստը շատ պարզ է և միանգամայն նման զարարացրիներին, Շապիկը երկար է, ուներից 3—4 վերշոկ բարձր, երկար թևերով և կուրծքին հասարակ կամ զար բափառ (սոկեթել ժապաւէն) կարած: Առուելապէս շիլա կամ զանաւուզ կտորից: Շապիկի վրայ հազնում են արխալուզ, չթից կամ մետաքսէ կտորից: Սա զրկելով բրանը, նույնով սեղմում է մէջքին և տոք լայն քղանցքներով իշխում մինչև նոկները, թեերը երկար են, և ծայրերին զար քայլած ու արծաթէ կոճակներ կարած, Մրա վրայից, մէջքին կապաւմ են մնաւաքսէ կամ հստարակ կտորից զօտի: Ցուրս ժամանակ մի երկրորդ արխալուզ էլ հազնում են տառնոնի վրայ, իսկ հարուստները՝ թաւիշից կամ հասարակ կտորից կարած մուշտակ:

Փողոց գուրս վայիս և մանաւանդ եկեղեցի գնալիս ամբողջ ջովին փաթաթւում են սպիտակ շարսաւի (զօն) մէջ, ծածկելով նոյն իսկ երեսը: Պատաները չեն կրում այս չարսաւը:

Ուներին հազնում են գուլպայ և քոչ՝ կանանչ կամ կարմիր:

Բ. Ցղամարդկանց.—Զոկերի հին սերունդը, մանաւանդ աղքատները, հազնում են տեղական, հին տարազով, իսկ նոր սերունդը, մանաւանդ հարուստները՝ նոր, երոպական տարազով: Վերին Ազգութիւնը անգական տարազ զրեթէ լիովին տեղի է տակէ երոպականին, մինչդեռ միւս զիւզերում նա զե՞ն ևս յարաւեռում է:

Հին, սեղական տարազը կայանում էր հետեւալում: Շապիկը կարւում էր կասաից, կրծքի բացուածքը կոճկւում էր ունրակի մօտ, թեերը համանում էին մինչև զաստակը և այսակ կոճկւում: Մրա վրայ, ուներին հազնում էին շալուար շալից կամ հասարակ կապատգոյն կասաից, շալուարի վերին մասն ուշխուրով ամրանում էր, իսկ ներքին մասը, փեղքերը, դրւում էին զուրգայի մէջ և վերայից տոլաղով կապւում: Շապիկի վրայից հազնում էին արխալուզ կապոյտ կապուից կամ չթից և կամ զանա-

ւուզից: Արխալուղի կուրծքը կռնկւում էր կամ գայթանի և կամ մետաղեայ կոճակիներով: Մէջքին կապում էին գօսի, հասարակ կամ շալ կտորից, մաս երեք մետր երկարութեան: Արխալուղի վրայից հազնում էին շուկայի, շալից կամ մանուղից: Առ երկու



տեսակ էր լինում. Թեւքաւոր և շարքազի: Առաջինը տարրերւում էր երկրորդից տառելատպէս նրանով, որ տաղնի սովորական թեքերի փոխարէն, ունէր բաւական երկար թեքեր, որոնք կուան տակից կախ էին. ընկնում, թոյլ տալով որ բազի վրայարխալուղի ամբողջ թեքն երեայ: Գեղեցկութեան համար թեքա-

ուր շուխի թնգերը կամ ձգում էին ուսերին և կամ ձախը ձգում էին ձախ ուսմին, իսկ այլ բռնում էին մէջքին զրած ձեռներում, Ռաներին հազնում էին զուլպայ և քոչ Պլիսին ծածկում էին զառան մորթուց կարած շատ բարձր (բուխտու) կամ միջակ բարձրութեան փափախ:

### ԳԻՒԻ ՑԱՐԴԱՐԱՆՑ

Ա. Աղջիկների.—Սրանք մինչեւ ամեռնամալը դլուխ չէին կապում, այլ մազերը սանրում էին, երկու հաւաաար մասի բաժանում, յետեի մասը հիւսում, 3—7 ծամ մնում, իսկ քոնքերի մոտինը այսերի վրայով քաշ ձգում: Ազա մի չելախտ—կարմիր կառակց ենանկիւնածն ծալուած մի կոտր—ձգում էին զլիին, ծայրերը բկավ անցկացնում և ծոծրակի մօս հանգումատում, այնպէս որ ճակատից փոքր բնչ բարձր երսում էին մազերը, իսկ չիւսում մազերի վնջերը կախ էին ընկնում այտերի վրայից մինչև կուրծքը:

Հարսանները աղջիկների զլիին ելախի տակից մի արախչին էին ծածկում, որի առաջի մասում, ճակատի վրայ, արծաթի դրամներ էին շարուած լինում:

Իր բուրմննը զործ էին ածում վարդի ջուր (զիւլաբ), որ պատրաստում էին վարդը լրի մէջ և աւալով:

Նորափեսանները իրենց հարսացուներին նույրում էին շմբիրկալած ինձիւրը և որանք ամենայն խնամքով պահում էին իրենց զրպաններում, որոյն սպի անուշանուաթիւն բուրէ: Մըխը-կալած ինձիւրը մի ինձոր էր, վերան չոր մեխակներ իրած և ուկեզոծ (զառ) թղթի մէջ փաթաթած:

Գեղեցկաննալու անհացողներն աչքերին «Ժարուր» (սիւրմա) էին քաշում, որը պատրաստում էին այսպէս. դմակ կամ հասի իւղի մէջ բամբակէ պատրայզ էին անցկացնում, վասում և փոքր բնչ բարձրից մի աման բանում, որոյն սպի մուրը նասի վերան. առա ալ մուրը հաւարում էին և լցնում հասի սոի կաշուց կարած պարկի մէջ ու պահում: հարկաւոր գէպքում միլլով—կեռ փղոսկրով —վերցնում էին այս մրից և քաշում աչքերին, որոյն սնորակ դառնան:

Մազերը երկարացնելու յուսով թէ աղջիկները և թէ կանայք հիւս էին զնում: Նոյնը մնում էին պատանները զլիիի քորը կորելու, աչքերը չցաւելու. նպատակով՝ չինան ջրով կամ զինով շաղախում էին, մնում միթիչ տաք տեղ՝ ձմեռը՝ քիւրսու վրայ, ամառը՝ արեի տակ՝ որ թթուի: Ցետոյ զլուխները լուանում էին,

հինգն քառում զիլիներին, մի շոր փաթաթում և մի օր այսպէս փաթաթուծ մնարուց յետ հետեւ օրը բուռնում էին Պառաւ կանացից շատերը այժմ էլ շարունակում են տարեկու մի կամ երկու անգամ էինա գներ:

Մազերը կակացնելու համար բուռնում էին մածունով, կամ թանով, և կամ ձորի դեղնուցավ: Բակ թեթից ապատուելու համար զլուխը բառնալին ջրախառն քացախ էին զարձածում:

Բ. Կանանց.—Սրանք սպարաբար շարութը մի անգամ, շարութ օրը, լուսնում էին զլուխներն ստորևնավ կամ զիլով և յետոյ, երբ չորանում էր, կապում էին յարգարանքը և այդուհետ կտարած մնում ամբողջ մի շարաթ: Նոյն խոկ զիշերները չէին քանզամ, որովհետեւ կապելը 1—2 ժամ է խուռած Ռուբան առանցում էին նորանտրանքը մինչև օր ընտելանում էին այդ ծանր և միշտ կապած յարգարանքին:

Գլուխը սանրեկուց յետոյ զագաթի մէջ անդից հերտովիծ (ταιε) են բաց անում, յետին մասի մազերը հիւսում են և ծամեր անում. տպա քունքի մօստի մազերը ոլորում են և այտերի վրայով կախ ձում, ծայրերը բռնում բերանով, ապա շալելի ելախը (եռանկիւնաձև ծալուած սպիտակ կտաւ) ձգում են զիխին, ծայրերը բերում բկի տոկով անցկացնում և կապում ծոծրակի վրայ: Սրա վրայից կտուում են թաքեալթուն և պալին:—Թաքեալթուն՝ 9 սանտիմետր լայնութեան և 72 սանտիմետր երկարութեան երկատակ մի կտոր է, որի մէջ տեղում երկը կոճակներով միացած է պալին: Վերջինս պատրաստելու համար 27 սանտիմետր երկարութեան զանազան կտորների վրայ շրէ կամ խոր են քսում և ոլորում, մինչև օր զանուում է 13 սանտիմետր հասառութեան, ապա նրան պայտաձև դիրք են տալիս: Թաքեալթին ձգում են զագաթին, այնպէս որ ծածկում է անկատի կէսը, ապա ծայրերն ականջի տակով անցկացնելով հանգուստում են: Պալին նստում է զագաթին, ծայրերը դէպի ծոծրակը ուղղուած: Պալու տակից կապում են սպալի տակի շորը, որ 9—12 սանտ. լայնութեան ծալուած կտաւի կտոր է. Սա կապում են, որպէսպի պալին բարձրանայ թեաքեալթից, որի հետ միացած է զայթանի բաւական երկար ճարմանտներով:

Յետոյ մի ուրիշ կտաւէ կտոր նախ եռանկիւնաձև և ապա 23—27 սանտիմետր լայնութեան ծալելով, կտապում են ճակատի վրայով ծոծրակին՝ այնպէս որ զրկում է թաքեալթին և պալին ու սրանց թիք պահում: աս կոչում է զամզա: Ապա ըլշմաղը, որ 72 սանտիմետրաչափ քառակուսի, սպիտակ կտոր է, եռանկիւնաձև ծալում են, բերանի ու քթի ծայրի վրայով ձգում և երկու ծայրը ծոծրակի մօտ հանգուստում են: ապա այս կտորի

կրծքի վրայ կախ ընկած եռանկիւնաձև մասը միքանի անգամ իրար վրայ ծալում են և բկի մօտ Զ առնտիմնոր լայնութեամբ ամրացնում այնպէս՝ որ ոտ գնչի տարածութիւնը Զ առնտիմնորաշափ երկարացնում է։

Սովորութիւնը է, որ ի նշան յարգանքի և շնուրանութեան մինին եռանկիւն ըլլազար բարձրացնում են քթի վրայ, իսկ առանձին եղած ժամանակ քաշացնում են բերնից ցածր։

Բըշմազի վրայից, երբեմն էլ տակից, կապում են վըրի ելլախը, մի մետրաչափ քառակուսի կտաւիք կտորը ձգում են դրխին, կողքերը ոլորում և քունքերի մօտով անցկացնելով բկի տակով տանում են և ծոծրակի մօտ հանգուստում։ Ապա 36 սանտիմետրաչափ կտաւը նախ եռանկիւնաձև և առա 18—22 սանտիմետր լայնութեան ծալելով, զնում են ճակատի վրայ և հանգուստում ծոծրակի մօտ։ առ կոչում է զամզա։ Ապա 72 սանտիմետրաչափ քառակուսի, սպիտակ մի կտոր նախ եռանկիւնաձև և առա 18—22 սանտիմետր լայնութեան ծալելով զնում են ըլլամազի վրայ, այնպէս որ բերնի մօտի ըլլազարից 5 սանտիմետրաշափ ցածր լինի, և յետոյ վզի վրայ ամրացնում։ Յետոյ կապում են շարաբանդով։ առ եռանկիւնաձև, երկտակ, երկու կտորներ են (31 ս. երկ. և 16 ս. բարձ.) որոնց երկու ծայրերը միացած են միմինաց հետ ժապաւինով, իսկ երբորդ ծայրերին ամրացրած է զայթան։ Սա անց են կացնում զլիսի վերայ այնպէս, որ եռանկիւնիների հիպոտենուզան ձգում է այտերի ուղղութեամբ և ամրողի կտորը զրկում է ծոծրակից։ Յետոյ ծայրի զայթաններն անցկացնում են բկի տակով և հանգուստում ծոծրակի մօտ։ Ապա քունքի մօտի մազի փնջիկը ոլորում են և ծայրը ամրացնում այս զայթանի վերայ։ Յետոյ կապում են մանղիլը։—Սա քիշմիր կտմ շալ և կամ ուրիշ թանգարքին, գունաւոր կտոր է, 45 ս. երկ. և 36 ս. լայնութեան, առասուած և վերին ծայրերում էլլորում։—կտորէ ժապաւէն—կարտե։ Սա զնում են շրնջբկապու վրայ, ժապաւէն անցկացնում վզով և բկի մօտ ամրացնում։ Մանզիլը ձգում է իւր երկարութեամբ (39 ս.) կրծքի վրայ, երբեմն մանզիլի շուրջը արծաթաթելով ծոփեր՝ զիւլաբաթլու սաշաղ—են կարում։ Յետոյ անց են կացնում հըրսաւնոցը։—մի թելի վրայ անց է կացրած 16—20 հատ արծաթեայ մասմէջ և զարգարուած զնդակիկներ, որոնց միջի երկու զնդակիկների մօտ ամրացրուած են արծաթեայ քօղով եռանկիւնաձև ճարմանդներ՝ պտիկ չանգեալ՝ և մի մի արծաթեայ քորոց՝ սաննմաղ պաշի։ արծաթեայ շզմայով թելի վերի մասումն էլ մի պղնձեայ ճարմանդ կայ. հըրըսանոցը անց են կացնում վըլինին այնպէս, որ զնդակիկները կանգնում են քունքերի մօտի

մազերի վերոյ, վերի ճարմանուն ամբացնուում են գազաթին, իսկ ներքեի, մի զնդակիթից վերև եղում ճարմանզներից իւրաքանչիւրը բարձրացնուում են և խուռմ ճակատի վրայի գամզի վրայ Ապա մի որիշ ՅԵ սանտիմենտարաշատփ քառակուուի կոոր՝ համա եռանկիւնածն և ապա 9 ս. լայնութեան ծալում կապում են ըկի տակով մանդիլի վրայից և ամբացնուում վզի վրայ Յեաոյ 72 սանտիմենտաշատփ կարմիր մետաքսեայ մի կոոր, որ չղըրմըզ է կոչուում, նախ եռանկիւնածն և ապա 9—14 սանտիմենտ լայնութեան ծալուով կապում են կզակի վրայ, այնպէս որ միայն ապիտուկ ըշշմաղից 2 սանտիմենտարաշատփ երեսում է, իսկ միւս շընքիազները ծածկուում են, Սրա վրայից նոյն կերպ կապում են կանանչ զըրմըզ և ապա Հալապի կոչուած նոյն մեծաթեան և նոյն կերպ ծարուած, առաջնինը կանանչ, երկարող գեղին աւկարմիր մետաքսայ կարմները, մինչը միւսից փոքր ինչ ցած, այնպէս որ զնչի վրայ երեսում են ապիտուկ, կարմիր, կանանչ, զեղին և կարմիր գոյնի կատրները Ապա ծածկում են ընկըռտանոցը, որ այսպէս են պատրաստուում. 54 ս. երկարութեան շաքարի թղթի վրայ շրէ կամ խմոր են քառում, և 12 ս. լայնութեամբ 3 կամ 4 մնզամ ծալուում, ապա սրա վրայ չոր են կարսում, յետոյ երեսին քառում են արծաթի թերով ապազնըզործած մի կոոր Սովորաբար ասպնազործուում են վարդ, թաշուն, խաչ, տառփեր և այլն Սրա վարի եղրից ամբացնուում են արծաթեայ մի շղթայ՝ շամփայ, որից արծաթեայ կարճ շղթայով կախուած են ճճիթք-եր, որ բազկացած են արծաթեայ երկու կամ երեք կոոր տափալի, մնամէջ, նշնուած 2 1/2 սանտիմենտը ենկարութեան և մատ 1 1/2 ս. լայնութեան ժթապազայշ հերքից, որոնց միջնինի վերոյ ամբացրուած են կարմիր և կանանչ հասարակ ակները թապազաների ծայրին ամբացած է 3 հատ արծաթեայ փոքրիկ զընդակիլ—պղիւժիօժ կամ նրիթըզորտովկ, ճըկաբանոցի չորս ծայրերին էլ ամբացրուած են ժապաւէնները ճըկատանոցը զնուում են զինին այնովէս, որ ճճիթերն իշնուած են մինչև ունեքերը, յետոյ յետին մասում ժապաւէնները հանգուատուում են միմենոնց հետ ճըկըռտանոցի վրայից ձգուում են՝ երխասարդ կանայք կարմիր՝ իսկ պատաւեներն՝ սպիտակ՝ կընջիկ։ Սգուորները սպի ընթացքուում, և այրիները մինչեն կընջին ամեւմնութիւնը կընջիկ չեն ձգուում։

Կընջիկը չիքիլայ է, եռանկիւնի ծալուած, որի եռանկիւնի ծայրը ձգուում են գագաթին, իսկ ուղիղ մասը ծոփերով քաշ տալիս ճըկըռտանոցի երեսին՝ այնպէս որ աչքերն էլ ծածկուում են, Կընջիկի վրայից ձգուում են միծ յիլախ, որ սովորաբար լինուում է գունաւոր շալ կամ մետաքսեայ կոոր՝ հալաթի, 6—7 ր. արծու-

դութեան, քառակուսի, մօտ մէկ ու կէս մետր մեծաթեան, որի մի ծայրին կայ արծաթեայ ճարմանդ-շանցեալը ։ Եռոնկիւնաձև ծալում են, ճարմանցաւար մասը ձգում զբիսին, ապա նոյն ծայրն անցկացնում թիվ տակով և միւս կողմից նոյն շալի մէջ ճարման դում Յետոյ շալի միւս ծայրը վերցնում են, իրար վերայ երկու անգամ եռոնկիւնաձև ծալում և վերի ծայրերը ձգում ուսերի վերայ, ապա հրամանցի շանցալը, որ զամզի վրայ էր խրած, հանում են և ամրացնում այս շալի վրայ, ինչպէս և սաննաւդ պաշիները ։ Եսին այնպէս են ձգում, որ պառաւներինը ամրողի ճըկտանոցը ծածկում է, իսկ երիտասարդներինը՝ մնում է միայն գոտաթի վրայ և կնջիկը ամրողովին երևում է։ Եալի վրայից վզի վերայով ձգում են շանցալը։ Սա արծաթեայ երեք խուփ է, իւրաքանչիւրը 2—4 ս. մետրթեան, որոնք միացած են միմեանց հետ 4—5 արծաթեայ շղթաներով, որոնցից վերջինի, ինչպէս և այս խօների վրայ, քաշ են գտիս 2 տանա. շղթաներով փոքրիկ արծաթեայ, մնամէջ զննակիներ՝ պիտի ։ Միջին խուփի վերի մասուց մի երկոտակ արծաթեայ շղթայ է ձգում, մօտ 11 ս. երկարութեան, որի ծայրին եռանկիւնաձև մի ճարմանդ՝ զլիսի շանցալ՝ է ամրացրած։ Միւս երկու խուփերից մինի վրայ ևս մի ուրիշ, եռանկիւնաձև արծաթեայ ճարմանդ՝ շանցեալ՝ է անմիջապէս միացած, իսկ երրորդի վրայ երկու արծաթեայ կարթեր են ամրացրուած։ Կարթերը ձգում են ըրեսանոցի ներքին զննակիկի վրայից, այնպէս որ զննակիկը մնում է կարթերի բացուածքի մէջ, միւս ճարմանդը վզի վերայով անցկացնելով միւս քունքերի մօտ ճարմանդում են, իսկ զլիսի շանցալը ամրացնում զանզի վրայ, շանցալն այսպիսի երկու հատ է լինում, որ ամրացնում են զլիսի աջ և ձախ կողմերում։

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ

### ԱՍՈՒՄՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐՄԱՆԻՔԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հասակ.—Գողթան գաւառն այն սակաւաթիւ գաւառներից է եղել, ուր փոքրահասակների ամուսնութիւնը շատ հազիւ է տեղի ունեցել<sup>1)</sup>։ Երիտասարդը 20 տարեկանից,

<sup>1)</sup> Հին ճարմանիքի վերաբերութեամբ ևս նիւթեր եմ հաւաքել Յղնայում առաւելապէս պ. Դասպար Գարբիէլեանից, և Ազուլի-